Երևան քաղաքի 5-7-րդ դասարանի աշակերտների շրջանում դեղերի անվտանգության վերաբերյալ իրազեկվածության բարձրացմանն ուղղված աշխատանքներ

ՀՀ առողջապահության նախարարության ակադեմիկոս Էմիլ Գաբրիելյանի անվան դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոնը Երևանի քաղաքապետարանի աջակցությամբ, ձեռնարկել է կրթական արշավ Երևան քաղաքի մի շարք դպրոցներում:

Կրթական արշավի նպատակն է դպրոցահասակ երեխաների շրջանում բարձրացնել դեղերի անվտանգության մասին տեղեկացվածությունը: Նման աշխատանքը թույլ կտա դեռևս աշակերտական աթոռից ծանոթանալ դեղերի հետ ճիշտ վարվելու կանոններին՝ հետագայում կանխելով դեղերի հետ սխալ վարվելու արդյունքում առաջացող հնարավոր վտանգները, կողմնակի ազդեցությունները, ինքնաբուժման հետ կապված բարդությունները և նմանատիպ մի շարք այլ խնդիրներ:

Փորձագիտական կենտրոնը դեռևս 1997 թվականից հանդիսանում է ԱՀԿ դեղերի անվտանգության դիտարկման միջազգային կենտրոնի անդամ և այս աշխատանքներն իրականացնում է այդ կենտրոնի կողմից մշակված ուսումնական նյութերի օգնությամբ: